

17.03.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ հրավիրված խորհրդակցությունը քննության առավ մարզի բուժամբուլատորիաների վերակազմավորման հետ կապված խնդիրները: Մարզպետը հանձնարարեց մարզի առողջության առաջնային պահպանման բուժհաստատությունների տնօրեններին՝ մինչև մարտի 20-ը մարզպետի հաստատմանը ներկայացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորված բուժհաստատությունների կանոնադրությունները: „ՀՀ կառավարության համապատասխան որոշումը, համաձայն որի առողջության առաջնային պահպանման սպասարկում իրականացնող բուժհաստատությունները փակ բաժնետիրական ընկերություններից վերակազմավորվելու են պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետք է իրականացվի սեղմ ու հստակ ժամկետներում: Դուք պետք է ակտիվ համագործակցեք պատկան մարմինների հետ եւ որեւէ օղակում խոչընդոտների առաջացման դեպքում մարզպետարանը պատրաստ է աջակցել ձեզ „- նշեց մարզի ղեկավարը: Ռաֆիկ Գրիգորյանը առողջապահական հաստատությունների տնօրենների հետ խոսեց նաեւ դեղորայքի ձեռքբերման եւ բաշխման, բուժսպասարկման որակի բարձրացման, աշխատանքային և կատարողական կարգապահության, գնումների ընթացակարգի հետ կապված խնդիրների մասին: